«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

# «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն   Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

---

ՈՐՈՇՈւՄ N 47

«27» 02 2019թ.                                                                 ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության կանոնակարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ ____________
(ստորագրություն)

Քարտուղար՝ ԱՆԺԵԼԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ ____________
(ստորագրություն)

## «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ N 38

«__28_»_____03_____2019թ.

ք. Գորիս

# «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի *շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության կանոնակարգը:*
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ

(ստորագրություն)

Հաստատված է

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի

2019թ. «Մարտի» «28» N 38 հրամանով

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Գորիսի պետական քոլեջի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման (այսուհետ՝ հարցման) կանոնակարգը սահմանում է «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ քոլեջ) արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցման անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

1.2. Հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և քոլեջի կանոնադրության պահանջների համաձայն և համարվում է արտաքին շահակիցների կողմից ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և ՄԿԾ արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3. Հարցումը կրթական ծրագրերի որակի ապահովման կարևորագույն բաղադրիչ է, որի անցկացման նպատակն է ստանալ տեղեկատվություն քոլեջի շրջանավարտների մասնագիտական և անձնային կոմպետենցիաների, ընդհանրական կարողությունների, դասավանդվող մասնագիտությունների պահանջվածության և նոր մասնագիտությունների առաջարկությունների, աշխատաշուկայում քոլեջի շրջանավարտների մրցունակության վերաբերյալ:

## 2. ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2.1. Հարցումն իրականացվում է տարածաշրջանի գործատու կազմակերպությունների (տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, տարբեր հասարակական կազմակերպությունների, տնտեսվարող սուբյեկտների) շրջանում:

2.2. Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա փետրվար-մայիս ամիսներին:

2.3. Հարցումն անցկացվում է քոլեջի շրջանավարտների և շարունակական կրթության, կարիերայի և արտաքին կապերի բաժնի (ՇԿԱԿ) կողմից:

2.4. Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից ներկայացված գնահատման հարցաշարի հարցերից կազմված հարցաթերթով (տե՛ս հավելված 1):

2.5. Հարցումն անանուն է և անց է կացվում թղթային եղանակով:

## 3. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

3.1 Հարցման արդյունքները մշակվում, վերլուծվում և պահպանվում են քոլեջի ՇԿԱԿ-ի կողմից:

3.2 Հարցման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր հարցադրման պատասխանի համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով[1]:

3.3 Հարցաթերթերն ունեն կարծիքների և առաջարկությունների բաժիններ, որոնց արդյունքները մշակվում և ներկայացվում են ուսումնառության բարելավմանը միտված ընդհանրացված առաջարկությունների տեսքով:

3.4 Հարցման արդյունքների մշակումն ու վերլուծությունը կատարվում է մեկամսյա ժամկետում:

3.5 Հարցաթերթում գնահատականների ուղղումները չեն հաշվարկվում:

---

[1] [illegible]

## 4. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

4.1. Հարցման արդյունքները և վերլուծությունները ՇԿԱԿ-ը քննարկում է (ներկայացնում է) որակի կառավարման հանձնաժողովի, որակի բաժնի, ուսումնական մասի հետ:

4.2. Ուսումնական մասը հարցման արդյունքների վերլուծությունների հիման վրա ամբիոնների վարիչների, մեթոդմիավորումների նախագահների հետ քննարկում և մշակում է ուսումնական գործընթացի և կրթական վերջնարդյունքների ձևավորմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

4.3. Ուսումնական մասի ղեկավարները մեկամյա ժամկետում առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակում են քոլեջում բարելավման գործողություններ ու միջոցառումներ և ներկայացնում Մանկավարժական խորհրդի հաստատմանը, որտեղ նշվում են դրանց իրականացման ժամկետները և պատասխանատուները:

4.4. Հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ամփոփ տեսքով, իսկ անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է:

## 5. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

5.1 Սույն կանոնակարգը հաստատում է քոլեջի Կառավարման խորհուրդը:

5.2 Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել քոլեջի.

- 5.2.1. տնօրենի,
- 5.2.2. մանկավարժական խորհրդի անդամների
- 5.2.3. Որակի կառավարման հանձնաժողովի առաջարկությամբ՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ:

## ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Հարգելի՛ շահակիցներ, Գորիսի պետական քոլեջը կարևորում է Ձեր կարծիքը և վստահեցնում, որ Ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու քոլեջի գործունեությունը:

Հարցումն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և.

- գնահատել 0-3 բալային սանդղակով, որտե՛ղ 0-ն նշանակում է, որ չի իրականացվում, 1-3 բալային սանդղակում 1-ը նվազագույն միավորն է, 3-ն առավելագույնը:

| *1. Գնահատեք մեր շրջանավարտների.* | *ՄԻԱՎՈՐԸ* |
|---|---|
| մասնագիտական պատրաստվածությունը | |
| տեսական գիտելիքների իմացությունը | |
| գործնական հմտությունները | |
| հաղորդակցվելու կարողությունները | |
| կազմակերպչական կարողությունները | |
| մասնագիտական գործընթացում ստեղծագործական մոտեցումները | |
| քննադատական-վերլուծական կարողությունները | |
| տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները | |
| խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողությունները | |
| մասնագիտական խոսքը | |
| էթիկայի և վարվելակերպի կանոններին հետևելը | |
| աշխատանքային պատասխանատվությունը | |
| թիմային աշխատանք կատարելու ունակությունները | |
| գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները | |
| ինքնազարգացման ձգտումը | |
| *2. Գնահատեք Գորիսի պետական քոլեջի հեղինակությունը.* | *ՄԻԱՎՈՐԸ* |
| Ձեր կազմակերպությունում | |
| տարածաշրջանում | |

| | | |
|---|---|---|
| 3. Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին դիմել Գորիսի պետական քոլեջ | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |

| |
|---|
| 4. Ձեր կարծիքով Գորիսի պետական քոլեջում ի՞նչ նոր մասնագիտության և/կամ մասնագիտացման կարիք կա |
| |
| 5. Որքանո՞վ են Գորիսի պետական քոլեջի շրջանավարտների մասնագիտական գիտելիքները մրցունակ աշխատաշուկայում |
| |

6. Աշխատանքի ընդունելիս հատկապես ի՞նչն եք կարևորում

7. Գորիսի պետական քոլեջի շրջանավարտների մասնագիտական ի՞նչ որակներ կցանկանայիք փոխել

8. Գորիսի պետական քոլեջի շրջանավարտնների ո՞ր առավելությունները կցանկանայիք ընդգծել

9. Ձեր առաջարկները.

| | |
|---|---|
| 10. *Ձեր կազմակերպությունում աշխատող Գորիսի պետական քոլեջի շրջանավարտների քանակը* | |
| 11. *Ձեր կազմակերպությունում աշխատող Գորիսի պետական քոլեջի շրջանավարտներից քանի՞սն են աշխատում իրենց մասնագիտությամբ* | |
| 12. *Ձեր կազմակերպությունում աշխատող Գորիսի պետական քոլեջի շրջանավարտներից քանի՞սն են աշխատանքի ընդունվել մրցույթով* | |